

MANOOGIAN SIMON RESEARCH FOUNDATION (MSRF)

ՀԱՅՏԱԴԻՄՈՒՄ

ԹԵՄԱ: ԱԿՑԻՉԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐՈՒՅՔԱԶՓԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՓՈՐՁԻ ԵՎ ԴՐԱ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

1. ՀԻՄՆԱԽՆԴԻՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Ակցիզային հարկը անուղղակի հարկ է, որը հաշվարկվում և վճարվում է օրենքով սահմանված ապրանքների ներմուծման կամ տվյալ պետության տարածքում այդ ապրանքներն արտադրողների կողմից դրանց օտարման համար: Ակցիզային հարկի նպատակը ոչ այնքան ֆինանսական, որքան վարքաբանական ազդեցություն ունենալն է: Ըստ այդմ՝ ակցիզային հարկը սովորաբար կիրառվում է այն ապրանքների պարագայում, որոնք առողջապահական, բնապահպանական կամ սոցիալական բացասական ազդեցություն ունեն:

Հայաստանի Հանրապետությունում ակցիզային հարկով հարկվող ապրանքատեսակներն են գարեջուրը, խաղողի և այլ գինիները, սպիրտը (բացառությամբ՝ խաղողի գինեկոթից ստացված կոնյակի սպիրտի) և սպիրտային խմիչքները, ծխախոտի արդյունաբերական փոխարինիչները, սիգարները, սիգարետները և սիգարետները՝ ծխախոտով կամ դրա փոխարինիչներով, բենզինը, հում նավթը և նավթամթերքները, դիզելային վառելիքը, նավթային գազերը և գազանման այլ ածխաջրածինները (բացառությամբ բնական գազի), օրենքով սահմանված արժեք կամ արտադրման տարեթիվ և շարժիչի ծավալ ունեցող ավտոմեքենաները, շարժիչային յուղերը:

2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Հետազոտության նպատակը միջազգային լավագույն փորձի հիման վրա ակցիզային հարկի կիրառելիության և դրույքաչափերի՝ Հայաստանում կիրառելի առաջարկների ներկայացումն է:

3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Հետազոտության շրջանակներում անհրաժեշտ է՝

- 1) Միջազգային լավագույն փորձի հիման վրա վեր հանել ակցիզային հարկով հարկվող ապրանքատեսակները և դրույքաչափերը
- 2) Ներկայացնել Հայաստանում ակցիզային հարկի կիրառելիության և դրույքաչափերի վերաբերյալ առաջարկներ

Ակնկալվող արդյունքը

MANOOGIAN SIMON RESEARCH FOUNDATION (MSRF)

Առաջադրանք 1. Միջազգային փորձի ուսումնասիրություն

Համադրելի պետությունների փորձի ուսումնասիրության հիման վրա վեր հանել ակցիզային ակցիզային հարկով հարկվող ապրանքատեսակների և դրույքաչափերի ամենաարդյունավետ մոդելները:

Առաջադրանք 2. Միջազգային փորձի հիման վրա առաջարկների ներկայացում

Հիմք ընդունելով միջազգային լավագույն փորձը և առաջնային ու երկրորդային տվյալների վերլուծությունը՝ անհրաժեշտ է ուսումնասիրել իրավիճակը Հայաստանում և ներկայացնել բարեփոխումների առաջարկներ:

4. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ, ԼՈԳԻՍՏԻԿԱՆ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտության համար հատկացվող գումարը 1,5 մլն դրամ է, հետևապես՝ ներկայացվող բյուջեն պետք է համապատասխանի սահմանաչափին:

Դիմումատուն պատասխանատու է լինելու իր լոգիստիկ հարցերը կազմակերպելու համար, այդ թվում՝ հանդիպումների կազմակերպման, ճանապարհաձախսի և այլն:

Հետազոտության տևողությունը 6 ամիս է:

5. ԴԻՄՈՒՄԱՏՈՒԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

Ովքեր կարող են դիմել

- Դիմողը դիմելու պահին և հետազոտության իրականացման ընթացքում պետք է լինի հայաստանյան ցանկացած բարձրագույն ուսումնական հաստատության բակալավրիատի կամ մագիստրատուրայի ուսանող:
- Կարող են դիմել ինչպես տեղացի, այնպես էլ միջազգային ուսանողները:
- Ուսանողը դիմումի հետ պետք է ներկայացնի աջակցող նամակ իր բուհի ղեկավարության կողմից:

Հաղթողի ընտրությունը

Մրցույթի հաղթողն ընտրվում է մրցակցային գործընթացի միջոցով, որի ժամանակ դիմորդները գնահատվում են ըստ հետազոտության որակի, իրենց ներկայացրած հայտի մեթոդաբանության, հետազոտության համար պահանջվող գումարի, համապատասխան մասնագիտական փորձառության:

ՄՍՀՀ-ի աշխատանքները համակարգվում են Հայաստանի ամերիկյան համալսարանի կողմից ՀՀ կառավարության հետ համագործակցությամբ: